Իջանք չայիրները

Իջանք չայիրները, բռնեցինք պարը,
Ետ գնացեք, մենք էլ տեսնենք մեր յարը:

Սարե՛ր, ձորե՛ր, ետ կացե՛ք,
Իմ յարի ճամփեն բացե՛ք:

Իջանք չայիրները, բռնեցինք պարը,
Ետ գնացեք, մենք էլ տեսնենք մեր յարը:

Լուսնակը բակ ա գցել,
Քեզ ամպի տակ ա գցել:

Իջանք չայիրները, բռնեցինք պարը,
Ետ գնացեք, մենք էլ տեսնենք մեր յարը:

Ուռի ես, կեռանալ մի,
Մեր դռնեն հեռանալ մի:

Իջանք չայիրները, բռնեցինք պարը,
Ետ գնացեք, մենք էլ տեսնենք մեր յարը:

Ձեր բաղի դուռը բաց ա,
Ոտներս շաղով թաց ա:

Իջանք չայիրները, բռնեցինք պարը,
Ետ գնացեք, մենք էլ տեսնենք մեր յարը: